



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 3-Լ

ԴԱՏԱՐԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-575-Ն օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասին 12-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 3
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
նախագահի
2023թ. հուլիսի 3-ի
թիվ N 3-Լ որոշման

ԳԼՈՒԽ 1. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՎՏՈՒՄԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՎՎՈՐՄԱՆ

1. Դատարանի յուրաքանչյուր նիստերի դահլիճ (այսուհետ նաև՝ Դահլիճ) ունի առնվազն երկու ոչ ապակեպատ մուտքի-ելքի դուռ, որոնցից մեկը նախատեսված է բաց, իսկ մյուսը՝ փակ գոտուց մուտքի-ելքի համար: Դատական նիստերին մասնակցելու համար ձերբակալված և կալանավորված անձինք Դահլիճ են բերվում փակ գոտուց մուտքի-ելքի համար նախատեսված դռնով, եթե տվյալ Դահլիճը չունի այդ նպատակի համար նախատեսված ոչ ապակեպատ առանձին դուռ:

2. Դահլիճն ունի հերթական համար, որի համարակալումն սկսվում է թիվ 1-ից՝ աճողական կարգով: Դահլիճի համարը և մեծատառերով գրված «ՆԻՍՏԵՐԻ ԴԱՎՏՈՒՄ» բառերը նշվում են 15 սմ * 30 սմ պլաստիկ ցուցանակի վրա: Դահլիճի համարը և «ՆԻՍՏԵՐԻ ԴԱՎՏՈՒՄ» բառերը նշված են 100 տառաչափով և «Գրապատ» տառատեսակով: Ցուցանակն ամրացվում է Դահլիճի արտաքին մուտքի-ելքի դռան աջ կամ ձախ կողքի պատին՝ տեսանելի, դռան վերին նիշի բարձրությամբ:

3. Դահլիճը պետք է համապատասխանի անվտանգության ապահովման ու առողջության պահպանման վերաբերյալ աշխատանքային նորմերի պահանջներին:

4. Դահլիճն առանձնացված է երկու հատվածի՝ դատավարական գործողություններ իրականացնող անձանց համար նախատեսված հատվածի (դատավոր, դատական նիստերի քարտուղար, դատավարության մասնակիցներ) (այսուհետ՝ Դատավարական հատված) և դատական նիստին ներկա գտնվող անձանց համար նախատեսված հատվածի (այսուհետ՝ Այցելուների հատված):

5. Դահլիճում Դատավարական հատվածն Այցելուների հատվածից առանձնացված է Դահլիճի կահավորանքին համապատասխան առնվազն 1 մետր բարձրությամբ փայտե կամ զրահապատ ապակե միջնորմով:

6. Դահլիճի Դատավարական հատվածի կենտրոնական հանդիսացող պատի մեջտեղում՝ հատակից առնվազն 2 մետր բարձրության վրա, ամրացված է «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» օրենքի պահանջներին համապատասխանող Հայաստանի Հանրապետության զինանշանը:

7. Դատավարական հատվածի կենտրոնական մասում՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի տակ, տեղադրված է դատավորի, իսկ դատական գործերի կոլեգիալ կազմով քննության դեպքում՝ դատավորների քանակին համապատասխան սեղան և բազկաթոռ (ներ):

8. Դահլիճի Դատավարական հատվածում՝ դատավորի, իսկ դատական գործերի կոլեգիալ կազմով քննության դեպքում՝ դատավորների սեղանի աջակողմյան կամ ձախակողմյան մասում՝ կլոր փայտե պատվանդանի վրա, տեղադրված է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի պահանջներին համապատասխանող, առնվազն 2 մետր բարձրությամբ դրոշածողի վրա ամրացված 1 մ * 2 մ Հայաստանի Հանրապետության դրոշը:

9. Դատավորի սեղանը պատրաստված է փայտից և երեք կողմերից՝ վերևի դիմային և կողային հատվածների գծով ունի 10 սմ բարձրությամբ և 2 սմ հաստությամբ պատնեշ:

10. Դատական գործերի միանձյա քննության դեպքում դատավորի, իսկ դատական գործերի կոլեգիալ կազմով քննության դեպքում՝ դատավորների սեղանը հարմարեցված է մեկ համակարգչի օգտագործման համար, և սեղանին առկա է համակարգիչ, ինչպես նաև դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոսներ:

11. Վերաքննիչ դատարաններում դատական գործերի կոլեգիալ կազմով քննության դեպքում և Վճռաբեկ դատարանում համակարգիչը տեղադրված է նախագահող և զեկուցող դատավորների դիմաց:

12. Դատավորի, իսկ դատական գործերի կոլեգիալ կազմով քննության դեպքում՝ դատավորների սեղանի հետնամասում տեղադրված է դատավորի/դատավորների ընդարձակ և կաշվեպատ բազկաթոռը/բազկաթոռները: Վճռաբեկ դատարանում նախագահող դատավորի բազկաթոռը տարբերվում է մյուս դատավորների բազկաթոռներից:

13. Դատավորի սեղանը, բազկաթոռը և Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է տեղադրված լինի առնվազն 0,45 սմ բարձրությամբ հարթակի վրա:

14. Դատավորի սեղանի աջակողմյան կամ ձախակողմյան հատվածում տեղադրված է դատական նիստերի քարտուղարի համար նախատեսված գրասենյակային սեղանը, որը հարմարեցված է համակարգչի օգտագործման համար, իսկ գրասենյակային սեղանի հետնամասում տեղադրված է աթոռ:

15. Դատավորի սեղանի դիմաց՝ կենտրոնական հատվածում, տեղադրված է ամբիոնը, որի վրա պետք է ամրացված լինի դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոս:

16. Դատավորի սեղանի դիմաց՝ աջակողմյան և ձախակողմյան հատվածներում, տեղադրված է (են) դատավարության կողմերի համար նախատեսված գրասենյակային սեղան (սեղաններ)՝ դրան (դրանց) համապատասխան քանակի աթոռներով:

17. Քաղաքացիական և վարչական գործեր քննելու համար նախատեսված Դահլիճներում դատավարության կողմերի համար նախատեսված գրասենյակային սեղանը (սեղանները) տեղադրված է (են) դատավորի սեղանի դիմաց՝ կողք կողքի, իսկ քրեական գործեր քննելու համար նախատեսված Դահլիճներում՝ դատավորի սեղանի դիմաց՝ միմյանց դեմ-դիմաց:

18. Դահլիճում դատավարության կողմերի համար նախատեսված գրասենյակային սեղանի (սեղանների) վրա տեղադրված են դատական նիստի ձայնագրման ապահովման համար բարձրախոսներ:

19. Այցելուների հատվածում ողջամիտ հեռավորությամբ տեղադրված են Դահլիճում ներկա գտնվող անձանց համար նախատեսված՝ ընդհանուր կահավորանքին համապատասխան նստարաններ:

20. Դահլիճում առկա է առանձին դատավարական գործողություններ իրականացնելու համար նախատեսված մոնիտոր՝ տեսանելի տեղում:

21. Դատարանի վարչական շենքում առնվազն մեկ Դահլիճ պետք է կահավորված լինի լսողական և/կամ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված համապատասխան սարքով:

22. Դատարանների յուրաքանչյուր վարչական շենքում առնվազն մեկ Դահլիճում պետք է լինի հաշմանդամություն ունեցող և հենաշարժական հատուկ միջոցներ օգտագործող անձանց համար նախատեսված տարածք:

23. Անհրաժեշտությունից ելնելով՝ Դահլիճում կարող է տեղադրվել այլ կահավորանք, ժամանակակից տեխնիկական և այլ միջոցներ:

24. Դահլիճի պատուհանը (պատուհանները) ծածկված է (են) Դահլիճի պատերի գույնին համադրելի միագույն շերտավարագույրով /ներով/:

25. Դահլիճը ձայնամեկուսացված է, և Դահլիճի պատերը կաթնագույն են:

26. Դահլիճում կառուցվածքային առանձնահատկությունների և տեխնիկական հնարավորությունների հաշվառմամբ տեղադրվում է օդորակիչ:

27. Դահլիճում հնարավորության սահմանում պետք է նախատեսվի հարմարեցված տեղեր և պայմաններ լրագրողների գործունեության համար:

ԳԼՈՒԽ 2. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ

28. Դատավորի աշխատասենյակի (այսուհետ նաև՝ Աշխատասենյակ) 15 սմ * 30 սմ չափերով ցուցանակի վրա մեծատառերով, 64 տառաչափով և «Գրապալատ» տառատեսակով նշված է՝ «ԴԱՏԱՎՈՐ» բառը, 64 տառաչափով և «Գրապալատ» տառատեսակով դատավորի անունը, ազգանունը:

29. Աշխատասենյակը պետք է համապատասխանի անվտանգության ապահովման ու առողջության պահպանման վերաբերյալ աշխատանքային նորմերի պահանջներին:

30. Աշխատասենյակը հնարավորինս լուսավոր է, ձայնամեկուսացված, իսկ պատերը բաց գույնի են:

31. Աշխատասենյակում՝ կենտրոնական պատին, ամրացված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, տեղադրված են Հայաստանի Հանրապետության դրոշը, դատավորի աշխատասեղանը, կաշվեպատ բազկաթոռը:

32. Աշխատասենյակում՝ կենտրոնական հանդիսացող պատի մեջտեղի հատվածում, հատակից առնվազն 2 մետր բարձրության վրա փակցված է «Հայաստանի

Հանրապետության զինանշանի մասին» օրենքի պահանջներին համապատասխանող Հայաստանի Հանրապետության զինանշանը:

33. Հայաստանի Հանրապետության զինանշանի աջակողմյան կամ ձախակողմյան հատվածում 2 մետր բարձրությամբ դրոշածող ունեցող փայտե պատվանդանով տեղադրված է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի պահանջներին համապատասխանող Հայաստանի Հանրապետության դրոշը:

34. Աշխատասենյակում աշխատասեղանը տեղակայված է այնպես, որ սենյակ մտնելիս այն տեսանելի լինի:

35. Դատավորի աշխատասեղանի հետնամասում տեղադրված է դատավորի կաշվեպատ բազկաթոռը, որն արտաքին տեսքով տարբերվում է Աշխատասենյակում առկա մյուս աթոռներից:

36. Դատավորի աշխատասեղանն ունի ուղղահայաց տեղադրված դիմադիր կամ առանձին սեղան՝ համապատասխան քանակի աթոռներով:

37. Աշխատասենյակում մնացած կահավորանքի դասավորությունը կատարված է սենյակի պատերի հատվածով այնպես, որ սենյակի կենտրոնն ազատ լինի:

38. Աշխատասենյակի պատուհանի համար նախատեսված է միագույն շերտավարագույր կամ վարագույր:

39. Աշխատասենյակի կահավորանքը ներառում է նաև՝

- 1) չիրկիզվող պահարան,
- 2) գրապահարան,
- 3) զգեստապահարան,
- 4) հեռախոս,
- 5) համակարգիչ,
- 6) օդորակիչ:

40. Աշխատասենյակում կարող են լրացուցիչ տեղադրվել նաև՝

- 1) գրասենյակային սեղան՝ հարմարեցված համակարգչի շահագործման համար,
- 2) տակդիր՝ նախատեսված հեռախոսի համար,
- 3) հեռուստացույցի տակդիր և հեռուստացույց,
- 4) բազմոց, բազկաթոռ,
- 5) սառնարան,
- 6) այլ կահավորանք, ժամանակակից տեխնիկական և այլ միջոցներ:

ԳԼՈՒԽ 3. ԱՆՑՈՒՄ ԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

41. Սույն հավելվածով սահմանված Դահլիճի և Աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը կիրառելի է այնքանով, որքանով դա հնարավոր է իրականացնել՝ ելնելով Դահլիճի և Աշխատասենյակի տեղակայման, մակերեսի և դիրքի յուրահատկություններից և հաշվի առնելով նաև ֆինանսական հնարավորությունները: